

*brevicaudatum*, *Pseudodiplostomum major*, *Neodiplostomum delicatum*, *Pulvinifer singularis*.

Наибольшее видовое разнообразие диплостомид отмечается нами у серебристой чайки (7видов).

Из семи видов диплостомид общим для трех видов птиц является вид *D.spathaceum*, для серопесочной поганки и серебристой чайки-яйца *D.helveticum*, установлен новый дефинитивный хозяин-серебристая чайка.

Все установленные виды диплостомид, за исключением *D. spathaceum*, отмечаются на территории Армении впервые.

Вид *P. major* регистрируется нами впервые на территории бывшего СССР, а два вида- *P. singularis* и *N. delicatum*-впервые для фауны Закавказья.

Անճառ լճի ջրլող թռչունների մոտ բացահայտվել է տրեմատոդների *Diplostomidae* ընտանիքի 7 տեսակ *Diplostomum spathaceum*, *D.helveticum*, *D.schigini*, *Posthodiplostomum brevicaudatum*, *Pseudodiplostomum major*, *Neodiplostomum delicatum*, *Pulvinifer singularis*: Բոլոր տեսակները, բացառությամբ *D.spathaceum*-ի, նշվում են առաջին անգամ Հայաստանի, *P.major* տեսակը նախկին ԽՍՀՄ-ի, իսկ *N.delicatum*, *P.singularis* տեսակները Անդրկովկասի ֆաունայի համար:

Seven species of trematodes of the family *Diplostomidae*, which are *Diplostomum spathaceum*, *D.helveticum*, *D.schigini*, *Posthodiplostomum brevicaudatum*, *Pseudodiplostomum major*, *Neodiplostomum delicatum*, *Pulvinifer singularis*, have been revealed in waterfowls of the Lake Sevan. All the species, except the *D.spathaceum*, are registered in Armenia, the *P.major* - in the former Soviet Union, the species *N.delicatum*, *P.singularis* - in the Transcaucasia fauna for the first time.

Биол. журн. Армении. 1-2 (50), 1997

УДК 616-006.445.616.08.577

ԼԻՊԻՂՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԽԱՆՁԱՐՈՒՄՆԵՐԸ  
ԻՈՆԻԶԱՑՆՈՂ ԵՄԱԿԱՅԹՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԵՎ  
ՊՈԼԻՆՈՒԿԼԵՈՏԻՂՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ՀԵՏՈ /  
Ղազարյան Պ. Ա., Վարդանյան Մ.Ս., Սահարյան Ա.Վ. -  
Հանրապետական արյունաբանական կենտրոն - Երևան,  
1997 - 15 էջ - Սատենագր. 15 անվ. - Հայ. -  
Ավանդ.15.11.96 N 23 - ՀԿՀ 97

Բերված են գրականության և սեփական հետազոտությունների տվյալները մոնո-, դի-, տրիպցիլգերիդների, ճարպաթրոնների, խոլեսթերինի և նրա էթերների, գլիկոսֆինգոլիպիդների և առանձին ֆոսֆոլիպիդների

կենսասինթեզի և քայքայման, ինչպես նաև լիպիդների գերօքսիդացման արագության փոփոխությունների վերաբերյալ իոնիզացնող ճառագայթման ժամանակ և պոլիմուկլեոտիդների օգտագործումից հետո:

Բացահայտվել են լիպիդների թվարկած ներկայացուցիչների փոխանակության առանձնահատկությունները հեպատոցիտների, փայծալի բջիջների և էրիթրոցիտների թաղանթներում ճառագայթումից 5, 10, 30 և 45 օր հետո: Այդ պայմաններում տեղի է ունենում ֆոսֆոլիպազա Ա<sub>2</sub>-ի ակտիվության և ցիտոտոքսիկ լիզոֆոսֆոլիպիդների կոնցենտրացիայի նշանակալի բարձրացում. լիպիդային գերօքսիդացման գործընթացի արագացում: Ձգալիորեն ճնշվում է <sup>14</sup>C - գլիցերինի ներգրավումը մոնո-, դի- և տրիացիլգլիցերիդների, ինչպես նաև թաղանթային հիմնական ֆոսֆոլիպիդների մեջ: Ցույց է տրված, որ իոնիզացնող ճառագայթումը ուղեկցվում է թաղանթներում լիպիդ/լիպիդային հարաբերակցության կտրուկ տեղաշարժերով և որոշ իոնների թափանցելիության մեծացմամբ:

Իոնիզացնող ճառագայթումից հետո պոլիմուկլեոտիդների ազդեցությամբ տեղի է ունենում հեպատոցիտների, փայծաղի բջիջների և էրիթրոցիտների թաղանթային հիմնական լիպիդների և առանձին ֆոսֆատիդների կենսասինթեզի որոշակի կանոնավորում, որն արտահայտվում է ֆոսֆատիդներ-գլիցերիդների և ացիլգլիցերիդների մեջ <sup>14</sup>C -գլիցերինի ներգրավման համարյա լրիվ նորմավորմամբ: Միաժամանակ նվազում է նաև լիպիդային գերօքսիդացման արագությունը և ֆոսֆոլիպազա Ա<sub>2</sub>-ի ակտիվությունը նշված հյուսվածքների բջիջներում:

Ստացված արդյունքները թույլ են տալիս եզրակացնելու, որ պոլիմուկլեոտիդների կիրառումը արդյունավետ է էրիթրոցիտների, հեպատոցիտների և փայծաղի բջիջների թաղանթային հիմնական լիպիդների և առանձին ֆոսֆոլիպիդների փոխանակության, ինչպես նաև լիպիդային գերօքսիդացման գործընթացների կանոնավորման գործում:

Изучали процессы биосинтеза, распада и перекисления липидов в мембранах гепатоцитов, клеток селезенки и эритроцитов и динамике ионизирующего облучения и после применения Са-двух-РНК. Установлено коррелирующее влияние полинуклеотидов на биосинтез моно-, ди- и триацилглицеридов, а также фосфатидов-глицеридов при указанных состояниях организма. Скорость перекисного окисления липидов и активность фосфолипазы А<sub>2</sub> почти полностью нормализуются. Полученные результаты указывают на целесообразность включения в комплекс лечения больных, подвергшихся лучевому поражению, Са-двух-РНК как эффективного препарата.

The investigations on different disturbances of the lipid main fractions and separate phospholipids metabolism at ionizing irradiation and after use of Ca-two-helix RNA have been studied. The ionizing irradiation is accompanied with some disturbances of cholesterol, acyl-glycerides and separate phospholipids synthesis. After use of Ca-two-helix RNA the certain regulation of lipogenesis, particularly of phosphatides-glycerides synthesis, is realized.